«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ

ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ XVIII.I գլխով.

«XVIII.I ՄՆՆԴԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՀՐԱԺԱՐՎԱԾ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՑԱԴՈՒԼ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ) ՊԱՀԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

173.1. Հացադուլը կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից գիտակցաբար և սեփական կամքով ցանկացած տեսակի սննդամթերքից և (կամ) ջրից որոշակի ժամկետով կամ անժամկետ հրաժարվել է, ինչի մասին վերջինս բանավոր կամ գրավոր հայտարարություն է ներկայացնում քրեակատարողական հիմնարկի վարչակազմ:

173.2. Հացադուլ իրականացնող անձի կողմից հացադուլ իրականացնելու մասին հայտարարությունը ենթակա է անհապաղ արձանագրման քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից: Հացադուլ իրականացնելը չի հանգեցնում կալանքի տակ գտնվելու կամ պատիժը կրելու սահմանված կարգի խախտման և նրա համար չի կարող առաջացնել անբարենպաստ հետևանքներ:

173.3. Հացադուլ իրականացնելու փաստը քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից արձանագրվելուց հետո քրեակատարողական հիմնարկի պետը կամ նրան փոխարինող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր հաղորդում է ներկայացնում քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմին և դատախազության համապատասխան ստորաբաժանում, իսկ կալանավորված անձի դեպքում՝ նաև քրեական վարույթն իրականացնող մարմին՝ նշելով հացադուլ իրականացնող անձի անունը, ազգանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման համար նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը կամ նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, կալանքի կամ պատժի սկիզբը, հացադուլի պատճառը, հացադուլ իրականացնելու վերաբերյալ հայտարարությունը (դրա առկայության դեպքում), այն սկսելու տարեթիվը, ամսաթիվը, օրը և ժամը:

173.4. Հացադուլ իրականացնող անձի համաձայնության առկայության դեպքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է նրա մերձավոր ազգականներին կամ նրա կողմից ընտրված անձին, բացառությամբ հացադուլ իրականացնող անչափահաս անձի: Հացադուլ իրականացնող անչափահաս անձի դեպքում նրա համաձայնությունը չի պահանջվում:

173.5. Հացադուլ իրականացնող անձի կողմից հացադուլ իրականացնելու վերաբերյալ հայտարարության մասին քրեակատարողական հիմնարկի վարչակազմին հայտնելուց հետո մեկօրյա ժամկետում քրեակատարողական հիմնարկի պետի կամ նրան փոխարինող անձի որոշմամբ քրեակատարողական հիմնարկի վարչակազմից նշանակվում է բանակցող և ավագ բուժաշխատող (այսուհետ՝ բժիշկ): Որպես բանակցող պետք է ներգրավվի սոցիալական կամ հոգեբանական աշխատանքներ իրականացնող բաժնի, բաժանմունքի կամ խմբի ծառայողը:

173.6. Բանակցողը միջոցներ է ձեռնարկում հացադուլի իրականացման պատճառները բացահայտելու և դրա դադարեցման համար հացադուլ իրականացնող անձի հետ անհրաժեշտ բանակցային աշխատանքներ իրականացնելու համար: Հացադուլ իրականացնող անձի կողմից հացադուլը չդադարեցնելու դեպքում բանակցողը զեկուցում է քրեակատարողական հիմնարկի պետին կամ նրան փոխարինող անձին՝ հայտնելով հացադուլի իրականացման և այն դադարեցնելուց հրաժարվելու հիմնական պատճառները:

173.7. Հացադուլ իրականացնող անձի համաձայնության առկայության դեպքում նա ենթարկվում է անհրաժեշտ բժշկական զննության և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից հացադուլ իրականացնելու փաստի արձանագրման պահից 24 ժամվա ընթացքում քրեակատարողական հիմնարկի պետի կամ նրան փոխարինող անձի որոշմամբ տեղափոխվում է այդ նպատակով հատուկ առանձնացված խուց՝ հնարավորինս հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկի շենքային պայմանները՝ անկախ ուղղիչ հիմնարկի տեսակից (բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների): Խուցը պետք է առնվազն ապահոված լինի սույն կանոնակարգի 46-րդ կետով նախատեսված

պայմաններով:

173.8. Հացադուլ իրականացնելու ժամանակահատվածում հացադուլ իրականացնող անձը գտնվում է մշտական (ամենօրյա) բժշկական հսկողության ներքո: Բժիշկը հացադուլ իրականացնող անձին նրան հասկանալի լեզվով ներկայացնում է սննդամթերքից և (կամ) ջրից հրաժարվելու հետևանքով առողջական վիճակի հետագա վատթարացման ռիսկերը և այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն հացադուլ իրականացնողի առողջական վիճակի չվատթարացման նպատակով:

173.9. Բժիշկը մինչև հացադուլի դադարեցումը յուրաքանչյուր օր պարզում է հացադուլ իրականացնող անձի կողմից սննդամթերքի և (կամ) ջրի ընդունումից հրաժարվելու հետևանքով գիտակցության մթագնման կամ կորստի, ինչպես նաև կոմայի մեջ ընկնելու դեպքում համապատասխան բուժում կամ արհեստական սնուցման ձևով բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու իրազեկված համաձայնության հանգամանքը և այդ մասին կատարում է գրառում նրա բժշկական քարտում:

173.10. Հացադուլ իրականացնող անձի նկատմամբ չպետք է կիրառվի որևէ ճնշում այն դադարեցնելու նպատակով: Նրան տրամադրվող բժշկական օգնությունը և սպասարկումը չի կարող պայմանավորվել հացադուլը դադարեցնելով:

173.11. Հացադուլ իրականացնող անձի գիտակցության մթագնման կամ կորստի, ինչպես նաև կոմայի մեջ ընկնելու դեպքում վերջինիս առանց իր համաձայնության տրամադրվում է անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում միայն կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

173.12. Հացադուլ իրականացնող անձի կյանքին վտանգ սպառանալու դեպքում արհեստական սնուցման ձևով բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է բժշկի պատճառաբանված գրավոր եզրակացության հիման վրա: Արհեստական սնուցման ձևով բժշկական օգնությունը և սպասարկումը պետք է իրականացվի մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում՝ պահպանելով հացադուլ իրականացնող անձի հիմնական իրավունքները և ազատությունները:

173.13. Հացադուլ իրականացնելու ընթացքում հացադուլ իրականացնող անձին օրվա կարգացուցակով նախատեսված ժամերին բանակցողն առաջարկում է օրվա սննդաբաժինը, իսկ հրաժարվելու դեպքում նշում է կատարվում քրեակատարողական հիմնարկի օրվա ճաշացանկից չօգտվողների ցուցակում:

173.14. Հացադուլ իրականացնող անձի տեղափոխումն այլ քրեակատարողական հիմնարկ, քննչական գործողությունների կատարման վայր կամ դատարան իրականացվում է ընդհանուր հիմունքներով, անհրաժեշտության դեպքում՝ բուժաշխատողի ուղեկցությամբ: Տեղափոխում չի իրականացվում բժշկի կողմից տրված՝ հացադուլ իրականացնող անձի

առողջական վիճակով պայմանավորված, վերջինիս տեղափոխման անհնարինության վերաբերյալ պատճառաբանված գրավոր եզրակացության հիման վրա:

173.15. Հացադուլը դադարեցնելու վերաբերյալ հացադուլ իրականացնող անձի հայտարարությունից կամ անհրաժեշտ սննդամթերքը և (կամ) ջուրն ընդունելուց հետո քրեակատարողական հիմնարկի պետը կամ նրան փոխարինող անձը այդ մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հաղորդում է ներկայացնում 173.3-րդ կետում նշված պետական մարմիններին և պաշտոնատար անձանց: Բժշկի կողմից հացադուլ իրականացնող անձի բժշկական քարտում հացադուլը դադարեցնելու վերաբերյալ հացադուլ իրականացնող անձի հայտարարության կամ անհրաժեշտ սննդամթերքը և (կամ) ջուրն ընդունելու մասին կատարվում է համապատասխան գրառում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: